

Զ Կ Ա Յ Ի Ր Դ ՈՒՆ

(Գրուած Զարեհ Կաթողիկոսի մահուան օրերուն)

Լեցուն էր վանքն ու վեհարան,
Բազմութիւնով յուղարկաւոր.
Զկայիր դուն.

Կը քաղցրանար սիրտն խոր
Պատկերդ աղուոր,
Ծաղիկն ինչպէս
Ասկի լինին մէջ արեւու:

Պարապ էր վանքն ու վեհարան,
Զկայիր դուն.
Մարդերն ամէն կարծես ծառեր
Ըլլային լոկ,
Զոր կը շարժէ հովը աւան:

Պառկեր էիր դագաղիդ մէջ,
Յոգնած կարծես հազար ամով,
Անառաքաս նաւը մահուան
Կը տանէր քեզ հեռու աշխարհ,
Զէին հասներ ուր մեր թեր:

Դէմքիդ վրայ չէր դողդողար
Ըսուեր ժպիտն մեռելներուն,
Ուր մահն ու փուն
Կ'ընէ իրար ա'յնքան նըման.
Քար էր կտրեր մարմինդ ամբողջ,
Զահանդանէ մը անանուն:

Ո՞վ էր փրկեր մահէն առաջ
Սիրտդ բիրեղ,
Ինչո՞ւ ամուր էին այնքան
Կղպուեր աչքերդ,
Մարդու մը պէս որ ա'լ չ'ուզեր
Ետին նայիլ:

Զէիր գիտեր, չգիտցար դուն,
Թէ ամէն իղձ, ամէն երազ,
Աշխարհին մէջ այս ապերախս,
Սերմեր են լոկ՝
Մահուան դաշին վրայ ցանուած:

Թէ դիրք ու փառք
Մուրհակներ են մարդոց կողմէ
Մեզի տուած,
Չոր կը պարտիմք մեր արիւնով
Վընարելու:

Թէ բարութիւն, սէր ու համբոյր,
Կեանքին դիմաց այս վաճարէր,
Քարեր են կեղծ,
Արեւին դէմ լոկ շողացող:

Տարիներով մեղմ հալեցար քաղցրութենէդ,
Բուրվառիւն մէջ քու Աստուծոյն,
Իբրեւ սաւաթ, իբրեւ նեններ.
Եւ աչքերէդ ինկաւ արցունք,
Ճամբուն վըրայ բոլոր տնոնց,
Քաղերն որոնց՝
Չարիքներու եւ մեղքերու պողոտայէն
Ընթացան լայն,
Փակած ամուր դուռներն իրենց
Խղմամբսանին ...:
Լաւ է քաշել ֆողը ներման,
Ձերք վարագոյր,
Սիրտնուն դէմ դառնադաժան:

Մարդեր կան որ չեն պատմուիր,
Որոնք հողին ու երկնքին
Դաճակութեան իբրեւ աղբիւր
Կը բաշխուին
Այլոց ցաւին ու երազին:

Վերն եւ հիմա,
Պարտէզին մէջ քու Աստուծոյն,
Որուն եղար դուն այնքան մօտ.
Բա՛ց հոգիիդ ծաղիւնն ամէն,
Ան դեղբաւներ ունի յարմար
Մեր վիշտերուն,
Այս աշխարհին մէջ չամոքուած:

Ըսէ՛ իրեն ձայնովդ բարի,
Թէ դուն հոս շատ ապեցար:
Պիտի նայի Ան վերքերովդ,
Հօր մը նըման.
Երկրի տնիւրն երկնքին մէջ
Կը փառուի լոկ:

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Լռած էր գրիչս ասեմէ մ'ի վեր,
Հոգիս կը խոկար՝ անասող, աներազ.
Մտէս կ'անցնէին տխրամած խոհեր,
Բաղխելով երկնի խորհուրդին անհաս:

Հին սէրեր, իղձեր՝ թեւաս, հաւամանդամ,
Ժպտեցան մերթ մօտեմալ սրտիս.
Անոնց դէմ այսօր բայց ես կը կենամ
Յաղթականի պէս սէզ ու բարձրավիզ:

Մեծ է այս խինդն սրտիս համար
Վիշերուն փոխ իր անհամար
Կու գայ բազմիկ երբ պերճօրէն.
Կեանքը ինչպէ՞ս ես չսիրեմ:

Խինդս մեծ է ու անսովոր,
Կ'ուզէ դառնալ հոգիս սէր.
Կրնայ դառնալ վսանգաւոր.
Խինդը սրէն ներս չեն բանսեր:

Նոր է տարին, բայց ոչինչ նոր
Կայ սրտիս մէջ, ուր հին սէրեր
Բռնանալով՝ թելով հզօր
Նորերու դէմ դուռն են փակեր:

1988

Գ. ՀԱՐՏԱՐ

*

Վեհաբանի պատահանէն,
Շողն արեւուն,
Յիշատակի մը պէս խօսուն,
Կ'երկարէր թել.
Անդին ճնշողուկ մը սրտփուն,
Կը նայէր լուռ շուրջն ու հեռուն,
Զկայիր դուն:

ԵՂԻՎԱՐԴ